

ՄԻՂԱՏԵՔ, ՈՐՊԵՍՁԻ ՉԴԱՏՈՒԹ

Եղբայրներ մի՛ բամբասե՛ք գիրար: Ան, որ իր եղբայրը կը բամբասէ կամ իր եղբայրը կը դատէ, օրէնքը բամբասած եւ դատած կ'ըլլայ, ապա երբ օրէնքը դատես, ալ դուն օրէնքը կատարող չես, հապա դատաւոր: Միայն մէկ Օրէնսդիր եւ դատաւոր կայ, որ կրնայ փրկել եւ կորսնցնել: Դուն ո՞վ ես, որ ընկերդ կը դատես (Յակոբ. 3. 17-4.12):

Եղբայրներ, սքափիմք մեր խելագարութենէն եւ ոտէ մէկը անիրաւարք չդատենք, ոչ ալ իրաւունքով՝ անողորմաբար, որպէսզի չըլլայ թէ անողորմենքու դատաստանը ընդունինք:

Եթէ մեղաւոր ու վիրաւոր է ան, որ կը դատես անով իսկ ողորմութեանդ եւ արցունքներուդ արժանի է եւ ոչ թէ դատապարտութեանդ. կարեկից եւ ցաւակից պէտք է ըլլալ այնպիսիին եւ ոչ թէ բամբասող: Իսկ եթէ արդար եւ անարատ է դատածդ, պէտք է աւելի վախճալ եւ դողալ անկէ, որովհետեւ ան դատաստանէ եւ բամբասանքէ ազատ ըլլալով, նախանձի կամ չար աչքի պատճառաւ գայն իբրեւ յանցաւոր կը դատես եւ ի լուր ամէնուն գայն իբրեւ մեղաւոր կը բամբասես եւ սուտով կ'արատաւորես անոր արդար ու բարի անունը:

Չե՞ս գիտեր այն, թէ ինչ չափով որ անոր յանցանքները դատես, նոյն չափով դուն ինքդ պիտի չափուիս Դատաւորէն (Տե՛ս Մատթէոս 7.1), որովհետեւ այն մեղքերը որոնցմով արդարը ստութեամբ կը բամբասես, ըլլայ շնութեան կամ այլ ծանր ու թեթեւ խօսքերով անոր դատաստանը դուն ինքդ պիտի կրես:

Ի՞նչ կը խորհրդանշէ Ողջոյնը պատարագի ընթացքին

Ողջոյնը առաջին հերթին խաղաղութեան եւ սիրոյ խորհրդանշիչ մըն է, որով հաւատացեալները կը միանան Քրիստոսի, նաեւ իրարու, հետեւելով Պօղոս Առաքեալի պատուէրին, որ կ'ըսէ. «Սուրբ համբոյրով ողջոյն տուէ՛ք իրարու» (Բ. Կորնթացիս 13.12):

Ողջոյնին իմաստը հաւատացեալներու միութիւնն է, եղբայրական հարազատ սիրով եւ ոգիով, առանց մէկը միւսէն խոռոված ըլլալու: Անոնք կ'ողջագուրուին իրարու հետ՝ որպէս բարեկամներ՝ առանց բարկութեան, նեղութեան, տարակարծութեան կամ ատելութեան: Այս բոլորը, Քրիստոսի պատուէրին համաձայն՝ երբ ան կը թելադրէ. «Եթէ գոհարանին վրայ, ընծադ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես՝ որ եղբայրդ վշտացած է քեզմէ, ձգէ՛ ընծադ գոհարանին առջեւ, գնա՛, նախ հաշտուէ՛ եղբորդ հետ եւ ապա, եկու՛ր եւ ընծադ Աստուծոյ մատուցանէ՛ք»:

ԱՌԱԿ. ԳԼՈՒԽ ԺԵ. 10-12

Բարի մարդուն խրատը ընդունելի է հարազատներուն համար, իսկ անոնք որ յանդիմանութեան չեն հանդուրժեր՝ վարկաբեկիչ վախճան պիտի ունենան:

Երբ մահն ու կորուստը յայտնի են Տիրոջ, որքան եւս առաւել՝ մարդոց արտերը: Անուղղայ մարդը չի սիրեր զինք յանդիմանողը եւ չի հաղորդակցիր գիտակից մարդուն հետ:

ՀԱՅՏԷ.



ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇԱՀԱՄԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 33.2-22 Հո. 12.1-13.10

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 5.17-21

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

5.17-20

Մի՛ կարծէք, թէ եկայ Մովսէսի Օրէնքը կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու: Չեկայ ջնջելու, այլ՝ ամբողջացնելու: Հաստատ գիտցէք, որ բոլոր Օրէնքն ու մարգարէութիւնը կէտ առ կէտ պիտի իրականանան առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ այս երկինքն ու երկիրը պիտի անցնին: Ով որ ամենափոքր պատուիրանն իսկ զանց ընէ եւ ուրիշներուն ալ պատուիրէ նոյնը կատարել, երկինքի արքայութեան մէջ յետինը պիտի նկատուի: Իսկ ով, որ գործադրէ պատուիրանները եւ նոյնը ուսուցանէ, մեծ պիտի ըլլայ երկինքի արքայութեան մէջ: Կ'ըսեմ ձեզի, երկինքի արքայութենէն ներս կրնաք մտնել ա՛յն ատեն միայն, երբ Աստուծոյ պատուիրաններուն նկատմամբ ձեր հաւատարմութիւնը փարիսեցիներուն եւ օրէնքի ուսուցիչներուն ունեցած հաւատարմութենէն աւելի չըլլայ՝ պիտի չմտնէք երկինքի արքայութիւնը:

ԱՐՏԱԶՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ

Մեծ պահոց երկրորդ Կիրակին Արտաքսման Կիրակի կը կոչուի Հիմնուելով Աստուածաշնչական այն դէպքին, ուր կը նկարագրուի ՆախաՀայրերու դրախտէն արտաքսուելու վիճակը իրենց անհաղանդութեան պատճառով: Մենազանդութիւնը պատճառ եղաւ, որ Աստուծոյ կողմէ կատարեալ ստեղծուած մարդը կորսնցնէ իր կատարելութիւնը Հեռանալով իր արարիչէն մեղքի գերին դառնալով: Ներողամիտ եւ անսահման սէր ունեցող Աստուծ իր Միածին որդին զրկեց աշխար մեղաւոր մարդը Աստուծոյ վերադարձնելու նպատակով: Մեր Տէր Յիսուս Քրիստոսը Մատթէոս աւետարանի ճամբով այս կը յայտնէ մեզի, թէ մարդը առիթ մը եւս ունեցաւ դրախտ վերադառնալու եւ այդ վերադարձը պայմանաւորուած է զղջումով եւ պատուիրանները գործադրելով Հաւատարմութեամբ: Կ'ըսեմ՝ ձեզի, երկինքի արքայութենէն ներս կրնաք մտնել ա՛յն ատեն միայն, երբ Աստուծոյ պատուիրաններուն նկատմամբ ձեր Հաւատարմութիւնը փարիսեցիներուն եւ օրէնքի ուսուցիչներուն ունեցած Հաւատարմութենէն աւելի չըլլայ՝ պիտի չմտնէք երկինքի արքայութիւնը:

ԹԵՆՈՂՐՈՍ ԶՕՐԱՎԱՐ



Ամասիոյ Սարու գիւղէն՝ բարեպաշտ ծնողքի զաւակ: Կը պատկանէր Մաքսիմիանոսի օրով զինուորներու այն կարգին, որ կը կոչուէր դիոնն, այսինքն «նորամուտ»: Ճամբորդած միջոցին օր մը հանդիպեցաւ ահագին վիշապի մը, գոր սպաննեց նիզակով եւ հաւատքով: Յետոյ, երբ յայտնուեցաւ քրիստոնէութիւնը, քննութեան կանչուեցաւ, համարձակ խոստովանեցաւ ստուգութիւնը, եւ բացի այդ, զիշեր ատեն կրակի տուաւ մեծագոյն աստուածուհի Ռէայի մեհեանը: Այս պատճառաւ սաստիկ քանակոծուել վերջ բանտ նետուեցաւ, ուր երկնային տեսիլքի մխիթարութիւնն ունեցաւ: Կրկին հարցաքննութենէ վերջ այրեցին սուրբը 306-ին: Նշխարները ամփոփեց Եւսեբիա անունով տիկին մը իր տան մէջ, որ յետոյ եկեղեցիի վերածուեցաւ:

Հայ Եկեղեցոյ տօնացոյցին համաձայն Թեոդորոս Զօրավարին տօնը կը զուգադիպի Շաբաթ, 20 Փետրուար, 2021-ին:

Պահեցողութիւնը պարտաւորիչ հրահանգ է հաւատացեալներուն համար

Ոչ: Պահեցողութիւնը պարտաւորիչ հրահանգ մը չէ. այլ՝ յանձնարարելի կանոն: Պահեցողութիւնը պէտք է ըլլայ ինքնաբոխ նուիրում մը, կամաւոր գոհողութիւն մը ենթակային կողմէ՝ առ Աստուած:

Եկեղեցին պահքի օրեր հաստատած է ժողովուրդը ուղղելու, չափաւորութեան եւ ժուժկալութեան վարժեցնելով՝ Աստուծոյ մօտեցնելու համար: Պահքը թէւ պարտաւորիչ չէ սկզբունքով, սակայն եկեղեցոյ վերին իշխանութիւնը հարկ եղած պարագային իր ժողովուրդը որկրամոլութեան ախտէն եւ կերուխումներուն յառաջացուցած մեղքերէն ձերբազատելու համար՝ իրաւասութիւն ունի պահքի օրեր հաստատելու եւ անոնց գործադրութիւնը հետապնդելու: Այդպիսի պարագաներուն, հաւատացեալ ժողովուրդին պարտականութիւնն է հնազանդիլ իր առաջնորդներուն եւ կատարել անոնց թելադրանքները յօժարակամ սրտով:

Պահքի համար սահմանուած են շաբթուան երկու օրերը՝ Չորեքշաբթի եւ Ուրբաթ: Չորեքշաբթին յիշել կուտայ Քրիստոսի մատնութիւնը, իսկ Ուրբաթ օրը՝ յիշատակութիւնն է Քրիստոսի չարչարանքներուն:

Ինչպէ՞ս աճիլ հոգեւորապէս

Քրիստոսը իր կեանքին մէջ ընդունող մարդը իր հոգեւոր կեանքին մէջ տեղբայլ պէտք չէ ընէ: Եթէ տեղբայլ ընէ, այլ խօսքով, եթէ չաճի իր հաւատքին մէջ, եթէ չհասունանայ Աստուծոյ հետ իր սիրալիր ու սուրբ յարաբերութեան մէջ, այդ կը նշանակէ, թէ իր հոգեւոր կեանքը սխալ ընթացքի մէջ է: Նման պարագային, պէտք է դիմէ իրմէ անելի հոգեւոր փորձառութիւն ունեցող անձի մը խորհրդատուութեան: Միայն եկեղեցի երթալով, Սուրբ Հաղորդութիւն առնելով եւ պատարագի մասնակցելով չենք աճիր: Աճելու համար խիստ անհրաժեշտ են երեք բաներ.

- 1) Աղօթքով ամէն օր մէնիկ պահ մը անցընել Աստուծոյ հետ
- 2) Սուրբ Հոգիին առաջնորդութեամբ Ս. Գիրքի ընթերցում կատարել
- 3) Հետեւիլ հոգեւորապէս աճած ու փորձառու անձի մը թելադրութիւններուն:

ՊԱՆ ԵՅ ՈՂՈՒԹԻՒՆ

Պահեցողութեան շնորհիւ էր, որ մեր երանելի հայրերը առաքինի դարձան եւ անմարմին հրեշտակներու կեանքը մարդկային մարմինի մէջ ապրեցան, երկրի վրայ իրենց երկրաւոր ցանկութիւնները սպաննեցին եւ իրենց հոգիները երկինքի մէջ ապրեցուցին: Մերժեցին անցաւոր հաճոյքները, ստանալու համար անանցանելի բարիքները:

(Յովհան Մանդակունի)

ԵՐԲ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆԴ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ Կ՛ՈՒԶԵՍ ՀԱՅՑԵԼ, ԿԱՐԴԱ՝ Սաղմոս 6

ՏԷՐ, զայրոյթիդ մէջ մի՛ յանդիմաներ զիս, բարկութեանդ մէջ մի՛ պատժեր զիս:

Ողորմէ՛ ինձի ՏԷՐ, տկար եմ ես.

Բժշկէ՛ զիս, որովհետեւ մինչեւ ոսկորներս կը դողամ:

Հոգիս ծանր խռովքի մէջ է. մինչեւ ե՞րբ, ՏԷՐ:

Դարձի՛ր, ՏԷՐ, եւ փրկէ՛ զիս: Ազատէ՛ զիս մահուրէն, որովհետեւ ողորմած ես:

Որովհետեւ մահուան մէջ ո՞վ պիտի յիշէ քեզ, անդրաշխարհին մէջ ո՞վ շնորհակալութիւն պիտի յայտնէ քեզի:

Հեծեծելէն յոգնեցայ, ամէն զիշեր ես լացով լուացի իմ մահիճս եւ իմ արցունքներովս թրջեցի անկողինս:

Աչքս մաշեցաւ ողբալէն, տկարացաւ նեղութիւններէս:

Հեռացէ՛ք ինձմէ դուք բոլորդ, որ անիրաւութիւն կը գործէք, որովհետեւ ՏԷՐԸ լսեց իմ աղօթքս եւ խնդրանքս ընդունեց:

Թող ամչնան ու սարսափի մատնուին բոլոր թշնամիներս, ամօթով մնան եւ իսկոյն հեռանան:

ՈՍԿԵՂՆ ՀԱՄԱՐ

Փոխանակ կորուստական ուտելիք վնասուելու, ջանացէք ապահովել այն կերակուրը ,որ յաւիտեական կեանքի մէջ կը մնայ:

(Յովհաննէս 6.35)